ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտական աշխատանք

Թեման՝ Աշակերտների բառապաշարի հարստացումը միջառարկայական կապերի կիրառմամբ

Ուսուցչուհի՝Ելենա Ղազաչյան Վոլոդյայի

«Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Գյումրի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....2

Գլուխ Ա. Կապակցված խոսքի տեղն ու դերը Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի դասընթացում.....4

Գլուխ Բ Կապակցված խոսքի սկզբունքերը, փուլայնության հիմնավորումը և ուսուցման առանձնահատկությունները.....8

Եզրակացություն.....14

Գրականության ցանկ.....16

Ներածություն

Լեզուն մարդկային հաղորդակցման գլխավոր միջոցն է։ Մարդիկ իրենց մտքերը ձևավորում ու արտահայտում են լեզվի միջոցով։ Ինչպես նշում է լեզվաբան Ս.Աբրահամյանը.- մարդն իր գործունեության ընթացքում կենցաղային, հոգեկան պահանջների բավարարման և այլ նպատակների համար միշտ մտքերի հաղորդման կարիք ունի։ Մարդու մտքերը կարող են վերաբերել առարկաների, անձերի, երևույթների, գործողությունների, այլ կերպ՝ ամեն բանի, ինչ գոյություն ունի աշխարհում տիեզերքում, մեր հոգեկանում, ինչը կարող է երևակայել մարդը։ Եվ այդ բոլորն անվանում են բառերով {1}։

Բառերի իմաստներն ու ոճական կիրառությունը քննելիս լեզվաբան Հ. Հարությունյանը գրում է.« Առարկաների, երևույթների նկատմամբ մարդիկ ունեն իրենց վերաբերմունքը, որն էլ արտահայտվում է բառի իմաստավորման մեջ։ Դա պայմանավորում է առարկայի նկատմամբ ունեցած ոչ միայն անհատական, այլև հասարակական վերաբերմունքով։ Պատահական չէ, որ որոշ առարկանների անուններ ինքնին առաջացնում են բացասական հույզեր» {2, էջ 96}։ հետևաբար բառընտրությունը կարևորվում է մի քանի առումով։ Նախ բառերը ճիշտ պետք է ընտրվեն, որպեսզի արտահայտվի խոսողին անհրաժեշտ իմաստը։ Սրանից բացի՝ բառի միջոցով խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում, բնորոշում, գնահատում որևէ իրողություն։ Հետևաբար ուսուցման գործընթացում էապես կարևորվում է աշակերտի բառապաշարի հարստացումը։ Եթե լեզվի համար կարևոր նշանակություն ունեն բառը և լեզվի ընդհանուր բառապաշարը, ապա խոսքի զարգացման համար՝ անհատական բառապաշարի հարստացումը։ Բնական է, որ որքան հարուստ է սովորողի բառապաշարը, այնքան զարգացած են նրա թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը։

Ուսումնասիրության կառուցվածքը

Աշխատանքը կառուցված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից։

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը

Աշխատանքում հիմնավորվում է թեմայի ուսուցումը, ներկայացվում է հարցի տեսական դրվածքը, ուղենշված է նպատակը, արդիականությունը, հետազոտությունն իրականացնելու մեթոդները՝ վերլուծական, համադրական, համեմատական։

Սույն աշխատաքնի նպատակն է

1. Պարզաբանել, որ յուրաքանչյուր ուսումնական առարկան հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի աղբյուր է։
2. Կիրառել ավանդական և ժամանակակից մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնք կնպաստեն դասի արդյունավետությանը։
3. Հարստացնել աշակերտների բառապաշարը, զարգացնել նրանց գրավոր և բանավոր խոսքը։

Այսպես, աշակերտների բառապաշարի հարստացումն սկսվում է նրանց ուսումնառության առաջին իսկ տարվանից։ Եվ արդեն միջին դասարաններում թե՛ հայոց լեզվի, թե՛ մյուս առարկաների դասընթացների շնորհիվ զգալի չափով մշակվում ու հարստանում է նրանց բառապաշարը։

Աշակերտների բառապաշարը այստեղից-այնտեղից բառերի սոսկ քանակական գումարը չէ։ Բառերը աշակերտների ուղեղում որոշակի համակրգված են իրենց իմսատային կողմով՝ կիրառական, կազմության և այլ հատկանիշներով։ Աշակերտների բառապաշարի վրա տարվող աշխատանքը չպետք է սահմանափակվի նրանց իմացած բառերի սոսկ մեծացումով։

Այդ պետք է տանել՝ ապահովելով հետևյալ պահանջները

- Աշակերտի բառապաշարի ոչ միայն քերականական, այլև որակական կազմի հարստացում
- Բառերի դիպուկ գործածություն
- Բառապաշարի մաքրություն

Գլուխ Ա. Կապակցված խոսքի տեղն ու դերը հանրակրթական դպրոցի հայոց լեզվի դասընթացում

Բառապաշարի զարգացումը լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճաններին և տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին: Աշակերտները պետք է պատկերացնեն լեզվի ամբողջ համակարգը, բայց այն պետք է ուսուցանվի ոչ միայն կանոնների միջոցով, այլև լեզվի կենդանի կիրառությամբ՝ խոսքով, իսկ դա հնարավոր է իրականացնել միջառարկայական կապերի կիրառմամբ:

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի մասին տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Տարբեր առարկաներից աշակերտների ձեռք բերած գիտելիքները պետք է դիտվեն փոխադարձ կապերի մեջ, դա կարող է ապահովել միջառարկայական կապերի շնորհիվ: Դրանցով են համակարգվում աշակերտների գիտելիքները, դրանք նպաստում են, որ աշակերտները միևնույն երևույթը դիտարկեն տարբեր տեսանկյունից, ընդհանրացնող եզրակացություններ անեն: Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Դասավանդման ընթացքում կարևոր տեղ է

պետք հատկացնել միջառարկայակն կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են։

Միջառակայական կապերը օգնում են աշակերտներին հասկանալու շրջապատող աշխարհը, նրա հատկությունները, հիմնական երևույթները, այնտեղ ընթացող գործընթացները և այն օրինաչափությունները, որոնց դրանք ենթարկվում են։

Այսպիսով, դպրոցական առարկաների փոխադարձ կապակցությունը սովորողներին համոզում է, որ գիտելիքների տարբեր ճյուղերի միջև չկա կտրուկ սահմաններ, որ կիրառության տարբեր ոլորտները միմյանցից կտրված չեն, այլ փոխադարձաբար կապված են միմյանց հետ։

Օրինակ, համանունների կիրառմամբ աշակերտները կարողանում են համադրել տարբեր առարկաներից ձեռք բերած իրենց գիտելիքները և համոզվել դրանում։ Հայոց լեզու-Պատմություն, Հայոց լեզու-Աշխարհագրություն, Հայոց լեզու-ՀԵՊ, Հայոց լեզու-Երաժշտություն

Հայոց լեզու-Պատմություն-Աշխարհագրություն

Վանեցի-վանեցի բառազույգը կարդալիս աշակերտները բացատրում են, որ 1վանեցի-Վան քաղաքի բնակիչ է նշանակում։ Պատմության առարկայից վերհիշում են Վան քաղաքի պատմությունը, իսկ Աշխարհագրություն առարկայից՝ Վան քաղաքի աշխարհագրական դիրքը, բնակչության կազմը, երկրորդ դեպքում վանեցի-վանել բայի անցյալ կատարյալ ձևն է։

Հայոց լեզու-Հայոց եկեղեցու պատմություն

կնքել-մկրտել

կնքել-կնիք դնել, վավերացնել

զատիկ-միջատ

զատիկ-Հարության տոն

հայոց լեզու-Երաժշտություն

քանոն-գծափայտ

քանոն-երաժշտական գործիք

Ռազմագիտություն

ուղեկալ-սահմանապահ ջոկատ

ուղեկալ-ճանապարհ փակող ձող

Միջառարկայական ուսուցում ասելով՝ նկատառվում է իմաստով և ձևով միմյանց կրացող, տարբեր առարկաների և ուսումնական նյութերի միասնական ամբողջությունը, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը։

Միջառարկայական կապերը պետք է նպատակաուղղված լինեն օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի եռամիասնությանը «բնություն-մարդ-հասարակություն ըմբռնմանը»։

Այս ուսուցման գործընթացում աշակերտները ձեռք են բերում հաղորդակցման կարողություններ և հմտություններ։ Նրանք տիրապետում են բառերի ճիշտ ընտրությանը՝ դրանք օգտագործելով տեղին, հասկանում են տարբեր բնույթի և ժանրային բնագրերի բովանդակությունը, որոնք խոսքային տարբեր միջավայրերում տարբեր կերպ են վերարտադրվում։ Միջառարկայաակն կապը կարելի է դիտարկել որպես առարկայակն ուսուցման համակարգի անհրաժեշտ տարր, քանի որ առարկաները և նրանց հարաբերությունները չեն կարող հարկադրվել միմյանց։

Միջառարկայական ուսուցումը կապակցված խոսքի զարգացման հիմնական միջոցն է, քանի որ ապահովում է բառապաշարի բազմակողմանի հարստացմանը։ փոխկապակցված դասերը ոգեշնչում են աշակերտներին, քանի որ մի առարկայի գիտելիքը խթան է հանդիսանում մյուս առարկայի համար։

Դպրոցում աշակերտի բառապաշարի հարստացման միջոցներն են առաջին հերթին գեղարվեստական գրականության, բառակազմության և քերականական ձևերի ուսուցումը։ Այս բոլորն ուսուցանելիս կիրառելի են միջառարկայական կապերը, որոնք էապես նպաստում են բառապաշարի հարստացման գործընթացի իրականացմանը։ Բնականաբար, բոլոր բառերը չէ, որոնք ուսուցանելիս կարելի է

միջառարկայական կապեր կիրառել, սակայն կան բառեր, որոնք կիրառվում են մեր կյանքի տարբեր բնագավառներում՝ արտահայտելով հասարակական, քաղաքական, արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտատեխնիկկական, ռազմավարական և այլ հասկացություններ, և հենց սրանց ուսուցման դեպքում է, որ անհասանելի են միջառարկայական կապերի դրսևորումները։

Միջին դասարանների I աստիճանում միջառարկայական դասերը հիմնականում պտտվում են «Մայրենի» առարկայի առանցքի շուրջը՝«Մայրենի-Տեխնոլոգիա», «Մայրենի-Մաթեմատիկա», «Մայրենի-երաժշտություն» և «Մայրենի-Կերպարվեստ» և այլ զուգահեռներով, որոնք կարող են վերածվել եռակողմ կամ քառակողմ դասերի։

II աստիճանում միջառարկայական դասերը հիմնականում պտտվում են՝«Հայով լեզու» առարկայի առանցքի շուրջը՝ «Հայոց լեզու-ֆիզիկա», «Հայոց լեզու-Քիմիա», «Հայոց լեզու-Պատմություն» և այլ զուգահեռներով, որոնք նույնպես կարող են վերածվել եռակողմ կամ քառակողմ դասերի։

Գործնական օրինակներով փորձենք ներկայացնել, թե ինչ ձևերով են միջառակայական կապերի դրսևորումները նպաստում աշակերտների բառապաշարի հարստացմանը։ նախ կիրառում ենք ավանդական և ժամանակակից մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնք նպաստում են աշակերտների բառապաշարի հասրտացմանը՝ զարգացնելով աշակերտների գրավոր և բանավոր խոսքը։

Գլուխ Բ Կապակցված խոսքի սկզբունքները, փուլայնության հիմնավորումը և ուսուցման առանձնահատկությունները

Ուսուցման գործընթացի արդյունավետությունն էապես պայմանավորված է դասավանդման մեթոդիկայով: Անհրաժեշտ է ուսումնական գործընթացում ներդնել այնպիսի մեթոդներ, հնարներ, միջոցներ, որոնք կիրառվեն սովորողի ինքնուրույն և սեղծագործական ունակությունների զարգացումը, դասը դարձնեն ավելի հետաքրքիր:

Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների ու հնարների կողքին գործունեության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը:

Բառուսուցման համար կիարռվող արդյունավետ մեթոդներից է խաչբառի կիրառումը: Խաչբառեր լուծելը սովորողների ամենասիրելի աշխատանքներից է: Մինչև սովորողը խորասուզված է հարցերի պատասխանները գտնելով, նա չի էլ զգում, թե ինչպես են բառերը դառնում իր բառապաշարի մի մասը, ինչպես է զարգանում իր բառապաշարը, ինչպես է նաև զարգանում իր վերլուծական-դատողական միտքը: Խաչբառերի հարցերը կարող են վերաբերել մեկ կոնկրետ թեմայի, ինչպես նաև տարբեր թեմաների կամ նաև տարբեր գիտությունների: Որոնելով ու գտնելով տարբեր գիտությունների վերաբերող հարցերի պատասխանները՝ աշակերտները վերհիշում են տարբեր տարիների տարբեր դասընթացներից անցած նյութերը:

Դասավանդման միջառարկայական կապերը հայոց լեզվի դասերին ապահովվում է հատկապես բառ- տերմինների ուսուցման շնորհիվ, որն էլ դառնում է խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման լավագույն նախադրյալը:

Ուսուցման գործընթացումհաճախ են կիրառում տարբեր խաղեր, որոնց հեշտ, արագ և հետաքրքիր կազմակերպմանը մեծապես նպաստում են տեխնիկական արդի միջոցները: Մենք ևս ուսումնական գործընթացում հաճախ կիրառում ենք տարբեր խաղեր, որոնցից է հետևյալ խաղ-

հնարը։ Սրա միջոցով սովորողները թե՛ բառապաշարն են հարստացնում, թե՛ երևակայությունը և թե՛ ծանոթանում են բառերի տարբեր խմբերին և տեսակներին։

Քանի որ դպրոցը հագեցված է նորագույն տեխնոլոգիաներով, այդ թվում՝ էլեկտրոնային (smart) գրատախտակով, մենք համակարգչի օգնությամբ ստանում ենք աղյուսակ, որտեղ գրված են տարբեր ոլորտների անվանումներ։

Բառեր որոնք կիրառվում են հետևյալ ոլորտներում	
Մաթեմատիկա	
Ֆիզիկա	
Բժշկություն	
Գրականություն	
Սպորտ	
Երաժշտություն	
Նկարչություն	

Աղյուսակի ներքևում գրվում են հետևյալ բառերը՝ Ֆիլհարմոնիա, նատյուրմորտ, կոսինուս, ալերգիա, սոպրանո, իմպուլս, արտադրյալ, այրվածքաբանություն,անեմիա, էսքիզ, մանկաբարձություն, կիսաքաշային, վոլտ, մաեստրո, դյուցազներգություն, ասպիրին, գերհաղորդիչ, այտոց, ծանրաձող, լոգարիթմ, ջերմափոխանակություն, հնգամարտ, ռոմանտիզմ, չափածո, թերություն, ծանրամարտ, պաթոլոգիա, մոլեկուլ, բուրգ, կլասիցիզմ, սիմֆոնիա, ձիաուժ, պրիզմա, հավասարում, էքսպոզիցիա, կոմպոզիցիա, դուետ, պարագիծ, վերջերգ, գեղձ, տազ, կուբիզմ, արիա, ինֆարկտ, էստրադա, կիլովատտ, եռացատկում;

Աղյուսակին և բառերին ծանոթանալուց հետո սովորողներին ժամանակ է տրվում դասակարգելու բառերն ըստ ոլորտների։ Տրված բառերը ճիշտ դասավորելու դեպքում ստացվում է հետևյալ պատկերը։

Մաթեմատիկա	Արտադրյալ, լոգարիթմ, կոսինուս, հավասարում, բուրգ, թեորեմ, պարագիծ
Ֆիզիկա	Վոլտ, մոլեկուլ, պրիզմա, ձիաուժ, գերհաղորդիչ, կիլովատտ, իմպուլս, ջերմափոխանակություն, մանկաբարձություն
Բժշկություն	Ալերգիա, թերապևտ, պատոլոգիա, գեղձ, ասպիրին, ինֆարկտ, այտուց, անեմիա, այրվածքաբանություն, մանկաբարձություն
Գրականություն	Կլասիցիզմ, տոմանտիզմ, վերձերգ, տաղ, սյուժե, կատակերգություն, դյուցազներգություն
Սպորտ	Դահուկացատկ, գեղասահորդուհի, ծանրամարտ, ծանրաձող, հնգամարտ, կիսաքաշային, եռացատկում
Երաժշտություն	Սիմֆոնիա, սոպրանո, ֆիլարմոնիա, մաեստրո, դուետ, էստրադա, արիա
Նկարչություն	Նատյուրմորտ, կոմպոզիցիա, էսքիզ, կուբիզմ, էքսպոզիցիա, դեկորացիա

Մեկնաբանելով խմբավորված բառերը՝ նշում ենք, որ դրանք տերմիններ են, այսինքն՝ բառեր են, որոնք կիրառվում են նշված ոլորտներում և արտահայտում մեկ հասկացություն։

Բնական է, բառերից շատերը սովորողներին ծանոթ չեն լինում, և անհրաժեշտ է լինում բացատրել դրանց իմաստները։ Իհարկե, կարելի է առանձինն-առանձին բացատրել յուրաքանչյուր բառի իմաստ, բայց որպեսզի աշակերտներն ավելի ակտիվորեն ներգրավվել ուսուցման գործընթացում, կարելի է օգտվել էլեկտրոնային բառարաններից, համակրգչով աշխատող աշակերտներին արդեն իսկ օգտվել գիտեն (այստեղ շատ կարևոր է նաև ուսուցչի պատրաստվածությունը,

որովհետև տարբեր հարցեր ծագելու պարագայում, պիտի կարողանալ համապատասխան ձևով բացատրել բառերի իմաստները, դրանց կիրառությունները)։ Այս ամենի շնորհիվ սովորողները յուրացնում են իրենց անծանոթ մի շարք բառեր, սովորում տերմին հասկացությունը։ Բայց միայն սրանով չի ավարտվում ուսուցումը։ Այս աղյուսակի տվյալները ուսուցիչը կարող է կիրառել նաև փոխառյալ բառերի (օրինակ՝էքսպոզիցիա, դեկորացիա, ասպիրին, ալերգիա, սյուժե, սիմֆոնիա) առանձնահատկությունները, բառերի կազմությունները ուսուցանելու համար (առանձնացնելով պարզ, բարդ, ածանցավոր, բարդածանցավոր բառերը)։

Այսպես՝ վարկ բառը, պահպանելով իր նախնական իմաստը՝ պատիվ, հարգանք, հեղինակություն, ձեռք է բերել նաև ֆինանսական տերմինի արժեք՝ նշանակելով որոշակի ծախսերի համար տրվող դրամական միջոց՝ այս կամ այն պայմանով։ Կռունկ բառը, որը չվող թռչունի անվանում է, ձեռք է բերել նոր նշանակություն՝ դառնալով շինարարական ոլորտի տերմին։ Նույն ձևով էլ երեկո բառը, բացի իր հիմնական նշանակությունից (օրվա վերջին մասը արևամուտի սկզբից մինչև կեսգիշեր), նոր իմաստ է ստացել իբրև գրականության և արվեստի բնագավառի տերմին՝ նշանակելով երեկույթ, հանդես, հավաքույթ՝ նվիրված որևէ բանի։ Այդ իմաստը դրսևորվում է հատկապես ասմունքի երեկո, հոբելյանական երեկո, գրական երեկո և այլ կապակցություններում։

Բազմիմաստ բառերի ուսուցման համար կիրառվող հետաքրքիր մեթոդներից է պայմանականորեն «Փոխանցիր հավը» կոչվող խաղի կրառումը։

Այն կատարում են ինչպես ռետինե հավի, այնպես էլ մեկ այլ առարկայի օգնությամբ (գնդակ, գրիչ և այլն)։ Մեթոդը նախատեսված է սովորածն ամրապնդելու համար։ Սովորողները նստում են շրջանաձև։ Մի աշակերտի տրվում է «հավը» (գնդակ, գրիչ և այլն), և ասվում է մի բազմիմաստ բառ։ Աշակերտը պետք է նշի բառի տարբեր իմաստները։

Այդ ընթացքում մյուս մասնակիցները պիտի «հավը» փոխանցեն կողքինին։ Երբ աշակերտը ավարտի թվարկումը, ում ձեռքում մնա «հավը», նա պիտի հաջորդ բազմիմաստ բառի իմաստներն ասի։

Համանունների ուսուցումը միջառարկայական կապերի ստեղծման լայն հնաարվորություններ է տալիս։ Մի քանի օրինակով ապացուցենք ասվածը։

Բերենք փող բառի օրինակը։ Աշակերտը տարբեր դասընթացներում և առօրյա խոսքում հանդիպել է փող բառի՝ դրամ իմաստով կիրառությանը, և լեզվի ուսուցման ժամանակ էլ նշվում են փող-դրամ հոմաիշները։ Ռազմագիտության դասընթացում այն արդեն այլ իմաստով է հանդիպում՝ որպես զենքի կամ գործիքի մաս՝ խոհովակ։ Սրանք լրիվ համնուններ են և ունեն նույն քերականական ձևերը՝ փողեր, փողի, փողով, փողերի և այլն։

Աշխարհագրության և պատմության առարկաների ուսուցման ընթացքում ատլաս բառը կիրառվում է որպես քարտեզագիրք, իսկ տեխնոլոգիա առարկան սովորելիս աշակերտները այն կիրառում են կտորի տեսակի իմաստով։ Այս բառերում նույնպես լրիվ համնուններ են՝ ատլասներ, ատլասի, ատլասների և այլն։

Ֆիզիկա կամ քիմիա անցնելիս աշակերտները հանդիպում են գազ բառին, որը բնորոշում է նյութի վիճակներից մեկը։ Գազը նաև մետքասյա շղարաձև գործվածք է։ Այն նաև բափման միավոր է, որը կիրառել է Հովհաննես Թումանյանը «Սասուցի Դավիթ» էպոսի մշակման մեջ։

Իր վրրանում բրոնակալը
Քառսուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վրրեն փափուկ խալի փլռել։

Ուսուցիչը պետ է նշի, որ արդի հայերենում այս բառը հազվադեպ է գարծավում, հնացած է։

Հետաքրքրական է նաև բութ բառի կիրառությունը։ Մարմնի օրգաններն անցնելիս բութը գործածվում է որպես ձեռքի առաջին մատ։ երկրաչափություն առարկայում բութ բառը անկյան ձև է (բութ անկյուն նշանակում է 90 աստիճանից մեծ անկյուն)։ հայոց լեզվում բութ-ը տրոհության նշան է… Իսկ ոչ տերմինային արժեքով բութ-ը ածական է՝ անհասկացող, հիմար իմաստով։ Օրինակ՝« Դեմքերը, ախ, բութ են այնպես, կարծես շինված են տապարով»,-գրում է Եղիշե Չարենցն իր «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ։

Միջառարկայակն կապերն ամենևին էլ չեն սահմանաձակվում միայն նշված առարակներով։

Պարզվում է, որ միջառարկայական կապերի ուսուցման գործընթացում աշակերտները ձեռք են բերում հաղորդակցման կարողություններ և հմտություններ։ Նրանք տիրապետում են բառերի ճիշտ ընտրությանը՝ դրանք գործածելով տեղին, հասկանում են տարբեր բնույթի և ժանրերի բնագրերի բովանդակությանը, որոնք խոսքային տարբեր միջավայրերում տարբեր կերպ են վերարտադրվում։

Եզրակացություն

Ամփոփելով վերև նկարագրվածը՝ ամրագրենք, որ միջառարկայական կապերը օգնում են դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիրակչական գործընթացի արդյունավետությունը: Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս՝

1. Միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ:
2. Այն նպաստում է նյութի լիարժեք յուրացմանը, անցածի և անցնելիք նյութերի միջև տրամաբանական կապերի ստեղծմամբ ձեռք բերված գիտելիքներն և կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը:
3. Տարբեր առարկաների հետ գործ ունենալով աշակերտներից շատերի մոտ ընդլայնվում է հետաքրքրությունների շրջանակները այդ առարկաների նկատմամբ:
4. Միջառարկայական կապերով անցկացված դասն ապահովում է գրեթե բոլոր սովորողների մասնակցությունը դասին, նպաստում նրանց մտքի արագ աճին, տրամաբանության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը:
5. Միջառարկայական կապերի կիրառումը աշակերտներին թույլ է տալիս ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, բարձրացնել իր ինտելեկտուալ մակարդակը, ավելացնել իր հետաքրքրությունն ուսման նկատմամբ, ընդլայնել մտահորիզոնը և զարգացնել հնարավորությունները:
6. Դասապրոցեսին կիրառվող մեթոդներն ու մեթոդական հնարները նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը և նրանք ամբողջացնում են իրենց պատկերացումները այս կամ այն իրողության վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք, բառապաշարի տարբեր շերտերի ուսուցումը հնարավոր չէ իրականացնել առանց միջառարկայական կապերի ստեղծման, քանի որ բառերն

անվանում են առարկաններ, հասկացություններ, հատկանիշներ, որոնք առնչվուն են տարբեր գիտությունների, կարող են ունենալ տերմինային արժեք, իսկ այդ ամենը մեկնաբանելու համար անհրաժեշտ է ստեղծել միջառարկայական կապեր, բերել օրինակներ, բացատրել իմաստային նրբերանգները, կիրառական առանձնահատկությունները։ Ուսուցման ընթացքում հնարավոր է կիրառել տարբեր միջոցներ ու մեթոդներ։ Այս ամենի միջոցով, և՛ ամբողջանում է պատկերացումը այս կամ այն իրողության վերաբերյալ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. Հայոց լեզու, Բառ ու խոսք, «Լույս» հրատարակություն, Երևան, 1986, էջ 3

2. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, «Սովետական գրող» հրատարակություն, Երևան 1968, էջ 288

3. Ե. Չարենց « Տաղ անձնական»

4. Հովհաննես Թումանյան, Սասունցի Դավիթ պոեմ, գլուխ XXI

5. Վ. Ա. Սահակյան, Վ. Վ. Սահակյան, Հոմանիշների, համանունների, դարձվածքների դպրոցական բառարան, Երևան, 2002թ. էջ 33